



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«24» մայիսի 2023թ.
No 1/18-4/31187-2023

«79 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ ԱԼԲԵՐՏ ԿԱՐԱԲԱԽՅՅԱՆԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ,
ՊՏՂՆԻ, ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ 15ԹՂՄ. ՏՈՒՆ-28
ՀԵՌ. 033-79-79-76, ԷԼ. ՓՈՍՏ՝ ABO.GH9696@GMAIL.COM

Հարգելի պարոն Կարաբախյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և «79 Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023 թվականի փետրվարի 28-ին կնքվել է ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/1-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն Վաճառողը պարտավոր էր պայմանագրի Հավելված 1-ի տեխնիկական բնութագրով նախատեսված ժամկետներում մատակարարել պլաստիկ քարտեր: Առաջին խմբաքանակը՝ թվով 4 պլաստիկ քարտ, տպվել և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե է ներկայացվել սահմանված ժամկետում: Հաջորդ խմբաքանակի տպագրման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից էլեկտրոնային փոստի միջոցով Վաճառողին 2023 թվականի մարտի 22-ին ներկայացվել են թվով 189 աշխատակցի անհրաժեշտ տվյալներ: Վաճառողի կողմից տպված պլաստիկ քարտերը՝ թվով 33 հատ, ներկայացվել են Վարչություն 2023 թվականի ապրիլի 12-ին, սակայն ամբողջությամբ եղել են սխալներով, վարչության աշխատակցի կողմից կատարվել են համապատասխան նշումներ սխալների մասին և խմբաքանակը վերադարձվել է վերատպման: Հաջորդ խմբաքանակը՝ թվով 50 պլաստիկ քարտ Վարչությանը ներկայացվել է 2023 թվականի ապրիլի 18-ին, որից 12-ը եղել են սխալներով և վերադարձվել են վերատպման: Հարկ է նշել, որ տվյալ խմբաքանակում ընդգրկված են եղել ուղղման նպատակով վերադարձված թվով 33 պլաստիկ քարտերը, այսինքն ընդհանուր առմամբ 22.03.2023-18.04.2023թթ. ընթացքում «79 գրուպ» ՍՊԸ-ի կողմից տպագրվել և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե է ներկայացվել թվով 42 պլաստիկ քարտ:

Միաժամանակ տեղեկացնում եմ Ձեզ, որ սույն թվականի ապրիլի 18-ից մինչև մայիսի 10-ը ներառյալ Վարչության կողմից պարբերաբար փորձեր են կատարվել «79 գրուպ» ՍՊԸ-ի հետ կապի դուրս գալու, նոր խմբաքանակի ներկայացման ժամկետների վերաբերյալ

տեղեկություն ստանալու նպատակով, սակայն «79 Գրուպ» ՍՊԸ-ն չի պատասխանել զանգերին և ուղարկված հաղորդագրություններին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստիպված է միակողմանի լուծել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և «79 Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի փետրվարի 28-ին կնքած ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/1-1 ծածկագրով կնքված գնման պայմանագիրը և պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան գանձել 49 680 ՀՀ դրամի որակավորման և 33 120 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն նաև նախաձեռնում է «79 Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Միևնույն ժամանակ Ձեզ եմ ներկայացնում Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետը խախտելու մասով հաշվարկված տուգանքի և տույժերի հաշվարկը.


տուգանքի հաշվարկ՝ $331\,200 \times 0.5\% = 1656$ ՀՀ դրամ,

տույժի հաշվարկ՝ $323\,211 \times 0.05\% = 161,605$ ՀՀ դրամ,

11 աշխատանքային օր ուշացման համար տույժ՝ $161,605 \times 11 = 1777,67$ ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ, որ «79 Գրուպ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 3434 ՀՀ դրամ՝ Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն որպես տուժանք և տույժ:

5/24/2023

X 

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատ.՝ Գ.Ղազարյան
Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 060-844-704



ՉՉ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խոբենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am